

վիճակը գեռ խառնակն բլլալ կը թուի, ապա թէ ոչ ֆրանսա՝ որ կը կարծուի թէ առանձնա շնորհում ունի հնազգիտական պեղուճներ կա- տարելու Պարսկաստանի մէջ, պիտի չթողուր որ լաւագոյն կտորները բնիկներու աւար գառ- նան: Թէեւ ինծի ծանօթ ամենահին պարսկա- կան անօթը՝ այս հաւաքածոյին մէջ գտնուող կզվմար մը՝ 515 1121 թուականներուն շի- նուած է, շատ իրաւացի պատճառներ ունինք հաւատարմութիւն որ Քէճէսի եւ Սուլթանապատի մէջ գտնուած նմաններէն մէկ քանին շինուած են Հարուն-էլ-Բաշիտի թագաւորութեան շրջա- նին, որ կը վերջանայ 800)ին (ն. ք.), որովհետեւ շատ մօտ նմանութիւն կայ նաեւ այս յիշեալ տեղերու եւ Եգիպտոս ֆոսթամի մէջ գտնուած հաֆիսի կտորներուն մէջ, ու գիտենք որ այս վերջինները քրիստոսէ հազար տարի առաջ շինուած են: Ինչպէս նաև շատ մը թուագրեալ պատմութեան և ամանիքի գտնուած են Քէճէսի ու Սուլթանապատի մէջ՝ Ժ. դարու պապականող և շատ արամբարաններէն կրնանք եզրակացնել որ նոյն տեղը գտնուած նման բայց աւելի հնորեայ ամանները մէկ քանի դար առաջուայ գործեր եղած ըլլան: Պարսկական յախճապակչինու- թիւնը բաւական ծանօթ է և հիմա կրնանք փաստհաշար յայտարարել որ Պարսկները եր- բէք անցած գացած ոճերու կէտ առ կէտ նմա- նութեան մէջ խորասուզուողներ չէին, և այս կէտին մէջ աւելի ֆրանսացիներու կը նմանէին քան թէ Զինացիներուն: Ամեն մէկ շրջան իր սեփական առանձնայատկութիւններով կը ներ- կայանայ պարսկի արուեստին մէջ: Աւան կուգայ, թէ եւ ուշ, արտայայտութեան պատմութեան մէջ պարսկայ մը լեցնելու եւ յիշարջնելու այն կարծիքները զոր մենք կազմած էինք այն մուճ և կարեւոր շրջանի մասին, որ անսխալապէս յայտը- դած է իսլամ սիրապետութեան իրարանցումին և որու միջոցին իսլամական արուեստի գլխաւոր առանձնայատկութիւնները բնորոշուեցան:

Պիտի պայթիմ վերջապէս... Ձիւ կը խարէ... Գիտմանները կը շահագործէ... Ազգութիւնը կը փառաւ... Սրմայի պատիւը կը բռնաբարէ... Կոր գտնուութիւններ... Չերսակալութիւն... Ըբտր... Յարութիւն գահիճ... Ձիւ խարէք, շարաշար կը խարէ... Իշիտ անպար- կեշտ ուսուցանալաններու հետ... Թըրքահիւն- լու Նոյնին կուրծքերուն վրայ... Օ՛հ, գար- չելի, գարչելի... Հիմա տուն պիտի վերադառ- նայ... Գանկը յոյնած հազարութիւն ստորին մեքենայութիւններով և գեւըը անարտայայտ շարապուշակ ծրագիրներու մէջ... Ձգուանք ալ ամէն կերպով պաշարած է հոգի... Ես չեմ ուզեր գլուխ անոր ազգադաւ գլուխին թով հանգեցնել... Ա՛յ, թոյլ պիտի շատ որ այս անգամ աչքերուս առջեւ գործուած ոճիք մըն ալ լայն ամակ է... Ես ազնիւ և պատուա- կան Հայուն մը աղջիկն էի... յայտ ազգագրա- ի մը կէտը: Ինչ՞ք Սրմա, կը խոտորի բախտի անիւնէ գահայիմօթը... Այս փայլեանէն ինչ 8. Ամբակում Նոր պիտի գլխմ, թէ Սրմա տակ անգլութիւններու զոճ մըն է, թէ ամուսինս ազգագրաւ մըն է միայն, թէ իրողութիւնը պատմաբար երաշխիք մըն է Սրմայի հաւա- տարմութեան և թէ իրեն պիտի փաստհիմնա- քիս ցնոյն այսպիսի խոստովանութիւն մը... Այո՛, 8. Ամբակում Նայրը եկեղեցականներու մէջ հազարագիւտ գեւը մըն է, որ իր երկար տարիները անցուցեր է բանտի և աքսորի մէջ և որ յայտ, տասը տարի է, իր հայրենիքէն հեռու, քստոր կը մնայ Պոլիս... Ան կրնայ հա- մոգել Նիկողոս աղան, իսկ ես պիտի սպառնալ ամուսնույ՝ Սրման հեռագրով Պոլիս գարձելի... վերջապէս... (Ուշադիր ականջները կը շարէ) Ինքն է, ախ, ինչ ուզեր իր գեւըը նոյն իսկ աչքիս առջեւ բերել:

(Դուռը բացուելով Յարութիւն ննայ կը մտնէ):

ՏԵՍԻԼ Բ.

ՀՈՒՓՈՒՄԷ, ՅԱՐՈՒԹԻՒՆ

Յար. — (Անօթապար) Ի՞նչ կ'ընես հոս մի- նակ, քե՛զ կը փնտռեմ...

Հոփ. — (Դժգոհ) Ձիւ փնտռելու պէտք չուրի... Ձիւ հանգիստ ձգէ այս տխուր սենեակին մէջ: (Երեսը կը դարձնէ)

Յար. — Կորե՛ն սկստ բանաստեղծութեան, դուն դրսի կեանքէն երբեք լուր չպիտի ունե- նաս: Աշխարհ դրամի վրայ կառուցուած է, կնիկ, դրամի... «Աս պահեսցէ զմեզ յամենայն փորձութենէ...» (Բարանքը շփելով)

Հոփ. — Այո, այդ դրամին համար դուն ամէն ոճիք գործելու յանձն առ...

Յար. — Աղբը աչքերը սիրեմ, Հոփիսիմէ, մի սկսիք նորէն... Հայտնի կերպով պատրաստել Հոփի. — Ես որոշած եմ այս վարկեանէն իսկ այս յարկին մէջ գեր չուրենալ:

Յար. — Հայտնի, անուշ, չեքերի պէս կը խօսիք, բայց հիմա ատենը չէ: Այսօր չուտ պիտի մեկնիմ:

“ԵՍ ՔԵԶ ՄԵՂԱՅ”

ԹԱՏՐԵՐԻՈՒԹԻՒՆ ԵՐԵՎ ԱՐԱՐՈՒԱՄՈՎ

ՊԱՏԿԵՐ ԵՐԿՐՈՐԴ ԱՐԱՐՈՒԱՅԻ

(ԱՐԱՐՈՒԱՅԻ ԿԼ ԱՐԱՐՈՒԱՅԻ)

ՏԵՍԻԼ Ա.

(ՀՈՒՓՈՒՄԷ Առանձին)

(Ներս կը մտնէ դառնացած երեւոյթով) Տունս զժոյր է դարձել... Յարութիւնի անգլութեանց բաժանի ալ յորդեցաւ... Թո՛ղ այս ամօթով չապախուած պատերը քանդուին՝ կոր- ծանուին... Թո՛ղ այս ապականութեան շէնքը հիմնայատակ կործանի... Դեռ այս միջոցորտը թարմ է ոճագործական խորհուրդներով...

Հռիփ. — Այսօրուան այս սենեակին մէջ գործած ոճիրդ մոռցար, այնպէս չէ...

Թար. — Նորէն մի' սնկիր, ի՞նչ ոճիր է որ շարունակ երեսնս կուտաս: Եթէ ես ոճրագործ ըլլայի, մինչեւ հիմա զիս մէջտեղը պիտի թողէին...

Հռիփ. — Բռնաբարոյմը, զրպարտութիւնը, ձերբակալութիւնը, մատնութիւնը, աքսորը, բանտը ոճիր չե՞ն...

Թար. — Իբիշտ միեւնոյն խօսքերն է որ կը կրկնես... Ապագան կրնայ գնահատել արժանիքս: Իս ազգին և կառավարութեան միջեւ այնպիսի դեր ստանձնած եմ որ առաջինին աչքին վատ կ'երեւիմ, երկրորդին լաւ. բայց իրաւանութիւնը հակառակն է, հասկցա՞ն...

Հռիփ. — Այդպէս առաջ կրնայիր զիս համոզել... Սրման միամիտ, երկշոտ և անբիծ աղջիկ էր... Աղէ՛կ կ'ընես, Յարութիւն, եթէ այս կեղծիքը կանխգամ ընդմիջող վերցնես մեր մէջէն...

Թար. — (Շոյեղով կնոջ ուղը) Եկո՛ւր, անուշս, տա փառն խօսքերէդ վա՛ղ անցիր... Աճէ՛րք քեզի երանի կուտաս որ դուն իմ կինս ես... Ի՞նչ այլանշակ խօսքեր ալ կ'ընես...

Հռիփ. — Ես անպատուութիւն կը համարիմ քեզի հետ կենակցելը... Այս ոճիրը ձեռքովդ կը մարդեն թէ ոչ...

Թար. — Կերակուրը պատրաստէ, անուշս, հիմա կատակելու ատենը չէ:

Հռիփ. — (Բարկացած) Վա՛յ, ըսել է իմ խօսքերս կարեւորութիւն չունին քեզի համար. կատակի կուտաս, լա՛ւ, ահա՛ տունդ, ահա՛ բանալիներդ (Բանալիներու օրցակ մը կը ննոկ գցէին) Գո՛ւզես թրուհիներով կառավարէ, կ'ուզես ոստիկաններով. անո՛նք թող քու կերակուրդ պատրաստեն: (Դուռը կը բանայ բարկութեամբ՝ դուռս եղջյու համար...)

Թար. — (Բաշեղով Հռիփսիմէին քեռէն) Հռիփսիմէ, երկու տարուան պէպէ՛ր կը յմանիս, եկո՛ւր, ո՛ւր կ'երթաս. առ սա բանալիները: (Առնելով գեսնէն):

Հռիփ. — (Մտնելով՝ դարձեալ գեսինը կը ննոկ) Դամ գործած ոճիրդ կը քաւես, Սրման հառագրով Պոլիս կը կանչես և կամ ես այս տունը մէջ գործ չունիմ: Ահա՛ ես կ'երթամ... (Դուռս կը ննոկ...)

ՏԵՍԻԼ Գ.

ՅԵՐԱԽԹԻՆ (Առանձին)

(Սենեակին դուռը բարկութեամբ փակելով բանալիները գեսնէն դարձեալ կ'առնէ եւ կ'սկսի

մտախոն երբեմնեկ՝ մտքը շրթունքին) Ո՛չ, կը-նոցս հետ կատակ ըլլուելիք... Այ այս անգամ ի՞նչ ալ ըսէ, իրաւունք ունի... Ի՞նչ գիտնամ՝ Սրմայի ի՞նչ ըլլաւ... Կարծեցի որ երբ ամբաստանութիւն կար վրան, անպատճառ իրողութիւն մը կեցած ըլլալու էր... ԸՏԻ՛ր... ան ի՞նչ աղւոր աչքեր ունէր... Յիմա՛րը, Նիկողոսն է, ինչ է. Ես ամենսին համար ընդգուշի, եղբ... բախտ ունի ու վայելիլ չգիտէ. սուրբի պէս աղջիկ է եղբ... Հա՛վասս փո՛րս մնաց... աւելի հարուած մըն ալ վրան ծապա... Հի՛շ մտքէս չպիտի ելլէ... Աս ամենսին աւելի ջիջերուս զպաւ... բայց ո՛չ, եթէ աքսորել չտայի՛ շուտով ինչպիւր կը տարածայնէին... Ռերիշները հաշտեցնելու տեղ գուցէ մենք բաժնուէինք... Ա՛խ, սա Հռոփիկը աղէ՛կ է, աղէ՛կ է ամմա ես ըրած բաները չեն քաշուիր... ալ այս անգամ օձիքս ազատեցիք չունիմ... Հիմա ի՞նչ ընեմ, բերե՛լ տամ Սրման... Օ՛հ, կարելի չէ, իմ պատիւս պիտի խճճեն և թէ հաշտութիւն ալ հաւանական չէ... Ի՞նչ ընեմ, ի՞նչ ընեմ... (Կանգ կ'առնէ եւ քաւական մտածելէ ետք) Օ՛, օ... շա՛տ լաւ կ'ըլլայ, շա՛տ լաւ եկաւ միտքս... Պապը-Չապիկէ՛ր ԿԵՏԻ՛տ Ալի՛ կ'երթամ հիմա, քանի մը ոստիկաններով վազը կամ միւս որ պաշտելի կուտան Նիկողոսի խոտուելը, ձերբակալել կուտան զիւրքը, յետոյ աքսոր միւսնե-րուն ետեւէն... Օ՛խ, շա՛տ աղւոր եղաւ, շա՛տ աղւոր եղաւ... Հռոփիկին ձեռքէն ալ կ'ազա-տիմ, ապագայ անտեղութիւններէ ալ... Ազգէ չուզէ Նիկողոսը կնիկը պիտի ընդունի, ի՞նչ պիտի ընէ. Օ՛հ, շա՛տ լաւ, շա՛տ լաւ...

(Աւարագոյր)

ԵՐՐՐՐՐԳ ԱՐԱՐՈՒՄՍ

Գործողութիւնը տեղի կ'ունենայ Ակն, Մար-գար աղայի տան կահաւորութեան սենեակներէն մեկուն մէջ. Գեսինը խախտական: Բեմի խորը՝ դէպի ձախ՝ դուռ մը եւ «տապալուռ» կոչուած բազի՛ր մը: Ճիշդ խորը «չառապ-խառ» որ քողորակ խախտակ մըն է մէկ մեքք բարձրութեամբ պատին մէջ մխրճուած. վրան առանձին պնակի մէջ շարուած պնակներ, ծածկուած սեւ սփռոցով. քովը խոշոր մոխրա-կաշներ՝ իրարու վրայ դրուած: Բարձունքէն կահուած ձորկեղան տան ազգանամարը շրջա-

նակով՝ Աջ կողմը « ուխ » ըստած դարակ մը՝ անկողին զետեղելու յասուկ : Հասարակ դարակ մը : Աջ ու ձախ պատերու երկարութեամբը ցած ու միակշուր սէտիւր (բազմոց), վրան ծաղկաւոր գորգով ծածկուած եան (մինտեր) եւ բարձր հասիկ հասիկ փոյկ փոյկ շարուած՝ կրնան պատերուն : Կողմնակի պատհաններ՝ ապակափնդկներ բաց, ուրիշ կը ծնունդի ծան յարակից պարտեզը մայիսեան աղարքներով : Պատհաններու ուղղութեամբ պատերու երկու անկիւններուն բարձունքը երկու առանձին ռաֆ (դարձեալ յոյդակի ծախսակ մը՝ մէկ մասը պատին մէջ միաձուած երկու մէքը բարձրութեամբ), մեկուն վրայ շարուած իւրաքանչիւր վրայ Սաղոնու, Նարեկ, Ժամագիրք եւն. կրօնական գրքեր. իսկ միւսին վրայ կարի լաւարիչ մը : Պատերու զանազան կախուած զանազան յուսանկարներ եւ երկար չկուրի մը :

ՏԵՍԻԼ Ը.

ՄՐՄԸ, ՄԵՐԳԱՐ, ԽՈՏԷՄ, ՆԱԶԼՈՒ

Արմա . (Հիւանդ պառկած է անկողինին մէջ : Գիշերոց կը կրէ : Գլխուն վերեւ կը գտնուի, առանձին պնակի մէջ, դեղի շիշ մը , դեղահասի ծուփեր , սերկելիչ մը եւ վարդ մը գոր մերք ընդ մերք կը հոտոտէ : Երբեմն հիւանդի յասուկ բացազանցութեանէր կ'արձակէ) Նազլու . (Գեղեցիկ դէմքով : Հագած է բացգոյն զպածոյէ շրջագգես մը՝ վիզն ու քեւերը ծածկուած անթիւներով : Գլուխը չբնայով ետմաս, ոտները խառնակ գուշպայ : Նստած է Մումայի դէմ , գուշպայ կը հիւսէ՝ երբեմն աչիւնով հիւանդը հսկելով) :

Մարգար . (Զախ կողմի բազմոցին վրայ, պատհանին առջեւ , ծաղկապսիկ նստած , անոնցը աչքը , աղօթագիրքը ձեռքը կը կարդայ՝ վերջին տունը բարձրաձայն արտասանելով) . . . Ամենակալ՝ տէր , թո՛ղ գեղը իմ . . . Ամենակալ՝ տէր , թո՛ղ գեղը իմ . . .

Խառն . (Սեւեռ հագած , առջեւը գոցոց կապած եւ քեւերը կարմիր քննոցներով սօսքած է : Ոտները պարզ գուշպայ եւ գլուխը պարզ ետմաս կը կրէ : Տան մէջ իշխողի մը շարժումներն ունի . Վարագոյրը բարձրանալուն դարակը խուզարկելու կը գրգռի : Յետոյ սուրակ մը օդի դուրս կը բերէ եւ դժգոհ անկարկ մը

ձգելով Մարգարի վրայ՝ կ'ողողուի Մումայի վրայ եւ ձակաւոր կը շփէ , երբեմն հոտոտել տալով զայն ափին մէջէն հիւանդին ռուսկներուն) Զորեմ՝, կրայնեալ մէջ կ'երթի . . .

Մարգար . (Մտնելիս յանկարծ վար կը դնէ աղօթագիրքը եւ անկոցները կը հանէ) : Զիւրիտի կոյրէ՛ր ուր առ ճանապարհն սուշը չերթայի՜նք , ճիւղերնիս կոյրէ՛ր . . . Բարո՛վ խելով Սրբազանը ըսած չիլէր : Ան օրուան խախտութիւնն ուր միտքս կ'իյնայ , գիտես թը զէնս հուսա (զանկը ցոյց տալով) տաղըմիջ ա'իլի . . . Նազլու՛ , օղու՛ , չըպուխս իլէն կրայ մի բեր : Սա աղօթագիրքն ալ տար ռաֆը դիր . աղօթելէն ալ բան մի չիմ հասկընար , Ժամէն ալ . . . (Ոտները կը շփէ) :

Նազլու . (Անկողնային գուշպան կը քողու , աղօթագիրքը ռաֆը կը դնէ , չպուխս կ'առնէ կախուած տեղէն , ինչպէս նաեւ մոխրակալ մը՝ շառաղիսնէին վրայէն եւ դուրս կ'ելլէ) :

Խառն . (Շարունակելով Մումայի մարմինը շփել : Բանդիմանակամ) Մեղայ՝ , ըսէ , մարդ , դուն Աստուծոյ չեմ վախնար . . .

Մարգար . (Աստուծոյ վախնալու հըմարտ առ տէրձէին ինկարը եւ . . .

Խառն . (Բանկարծ կը կենայ , բարկութեամբ լնցուն անկարկ մը կը ձգէ Մարգարի վրայ եւ գլուխը կ'օրօրէ) :

Լուրբիւն .

Մարգար . (Կիտէ ի՛շ գէշը գէշը կու նայի . . .

Խառն . (Այլ ձեռքն ուժգին կուրծքին վրայ սեղմելով) Ը՛նչ , չորեմ՝ տամարդ , աս փութունը քու թիթիգութիւնդ կու քաշնիք . . . Անխրտար փարաները տարիւր ծովը թափեցիր , հիւննդութիւն մին ալ փետա՛հ անէլ տուիր մատուցի , ելար եկար . . .

Մարգ . (Կնի՛կ , ես ի՛նչ ուր արիւր իմ նը , հարակա՛ն վաղիքէս իմ իճրա արեր : Տէրի՛ւ քի հարուր օսիկ , ալարի վարիէ՛ս ըլ ուր աս աղ-չըկանս ուղուրին զնիմ՝ նը սրիւրտուրի մը պիլէ ումուրս չէ . . . Զէհէր մեր թէ՛ճէլլուն ափուր-տար մին է եղեր . . . Աս բաները մեր գլուխն բերողներուն վրայ իշալլա՛հ Աստուծու կրակը տի թափի . . .

Խառն . (Օխան օտարին խաղա՛հալ մի՛ գնէր , խաղա՛հալը քո՛ւ քողդ է . . .

Մարգար. — Հէկպէ՛թ, խապահա՛սթն իմ քով է ուր ես առնեմ սոյսուգ փեսաներո՛ւ իմ տիւշմիշ եղեր... Աշխրբքին երեսը չիֆթ մի նռան հաստիկի պէս աղշիկ ունէի, տարի ձեռքովս կրա՛կը ձգեցի... Օր մի ան խաչուկին ան փողոցան կենիշ տի բանամ իմ տունն թէն պէլխանէ չէ. թող Նազդուն ֆոս մնայ, ինք թող երթայ ճէհէլէմ լընի: Արածները ձեռք կուտայ՝...

Խառն. — Տէ՛ կինէ մի պաշլայեր, ի՛շ կ'ուզես մասուլմէն...

Մարգար. — Զաթի՛ ան մասուլմին (դուռը ցոյց տայով) Տըմա՛ր է ուր մինչուկ աս օրս ձանս չիմ հաներ: Ըմմա, խայիր, համբերութիւնս հասաւ, իմ տունն թէնպէլխանէ չէ, թող տէ՛ֆ լընի երթայ... Ո՛ր կ'ուզէ հոն թող երթայ...

Խառն. — Մարգ Աստըծու, մէկ աղջկանըդ հալը նայէ, մէկըլին մեղքըցիր, հիմա ատ խորաթաներուն սրա՛ն է: Անխրտար պործ խարձ արիր, եւար թա՛ Ստըմպօլ գացիր, պօշ ուր ետ դարձար նը պարեմ լեզուգ նե՛րս քաշէ քիշ մի...

Մարգար. — Պէհէ՛ կնիկ, ես ուր կըսիմ կըսիմ նը՝ քու ատ պէնդ չի՛ մանայ. Ստըմպօլը թու ան եռնի գիտցած Ստըմպօլը չէ՛ մնացեր. թու մի ջուրնն մեջ մարդը կու խեղդեն...

Նազլու. (Միկ ձեռքով չարխար ըն միւստովը մոխրակաղը բռնած ներս կը մննէ ու Մարգարի ներկայացնելով՝ նորէն կ'սկսի գուշպան հիւսիսը)

Խառն. — Զաթի՛ ես գիտցայ ձեր գլխին գալիքը: Մինակ ես մեռնիրս չի տի դիննամ. անխրտար դէմ կեցայ ուր չերթայ:

Նազլու. — Հեպա ե՛ս, օճու պէս գերիկցայ...

Մարգար. — (Կրակը գետնելով ծխախոտին վրայ) Վե՛՛վ ումմիշ կուլլեր. աս ինչ ուր թերս բան ուր կար նը իմ գլխին գալու էր...

Խառն. — Հուսայեկ քսան օր է գալերինդ, ալ բան մնաց ուր չի լսինք... Աս ախօճը չի լսած առտերն ու ուշադրամօրները ուրկի՛ց ալ կու գընին կու խորաթին...

Մարգար. — Էհալէ է, լեզուն սուկը չունի

Խառն. — Չլտիկ կնտոց բերանը կու գոցուի՛ տըհա... բաներնին գործենին ի՛նչ է ուր... Սուտը ձուգանքով կու մաղեն...

Մարգար. — (Հառաչելով) Օ՛ֆ, օ՛ֆ, օ՛ֆֆ, տուշ տեղը չէ՛ ուր Այնէն ելլողը Աւետարանի

ըսածին պէս օտարը փոշին կու թոթվէ, անենկ կու փախչի...

Խառն. — Սո՛ւս եղիր, Ստըմպօլն ալ տեսանք... Տըհա՛ եւել պէլադ գոտար...

Մարգար. — Չանչան կ'անես, կնիկ, Ստըմային մէյ մի հարցուր թը Ստըմպօլ ի՛շ տեղ եւ Սոմա՛, գլխիդ վեր առ, բան մի գուրուցէ:

Սոմա. — (Քիչ մը վերանկը բարձրացնելով) Օ՛խ, գարնան հոտը ի՛նչ անուշ կու փշէ պախձաներէն... Հայրի՛կ, աս առտու սա ծառին վրայ պիւլպիւլ մի եկեր թառեր էր, կու կանչէր, գիտես թը ի՛նչ էր ուր պախձան տալէթ կ'անէր... Երի թը օտքի ա՛լելի՛խ, երկաթ մին էր գիտես թը ոտքերուս ի՛ջաւ...

Մարգար. — Ֆէռահցիր, Սոմա, վաղն ուր ոտքի ելլաւ նը՝ ուխտ իմ արեբ՝ խուզի մը մատաղ տի կըլլիմ. մատաղն ալ ձեռքո՛ւդ տի ձաղպես:

Սոմա. — Գիտե՛ս, հայրիկ, Հոռփիկ հանումին ուր կու խորաթէանք պախձային սէֆաները նը՝ բերնին ջուրերը կու վազեր... Ըա՛տ կու հաւատեր...

Մարգար. — Ա՛խ, ա՛խ, աշխարքը թերս է. որունը մէկ չէշիտ, որունը պաշխա՛ չէշիտ... Հոռփիկ հանումին պէս նազենիմի աղշին ուր անենկ գեւի մը ձեռնն է ինկեր նը՝ գնա հասկըցիր աշխրբին հալը: Սոմա՛, օրո՛ւլ, իշտէ աշքովդ տեսար. վա՛յ անոր ուր բերանը կու բանայ, շիտտակ խորաթա մի կու փախցընէ:

Սոմա. — Ա՛խ հայրիկ, իմ ցաւս մոռցեր

իմ, Հոռփիկ հանումին վրայ կու մտածիմ... Վա՛խ քուրիկ, շլլի՛ էր պլլուեր, չէ՛ր թաղուր ուր իս տանին. մէյ մի արխա՛նը երեսը կու լքենէր, մէյ մի գապթիկին... Արիկը նախցաւ ուր իս թող տալու ձար չկայ, ոտքերուն տակը առաւ, անէ՛ մի տիեց ուր տըհա գիտիմ թը աղիկելու ձանը ալօծնա է:

Մարգար. — Ա՛ն նազենիմաղչան վրայ ձեռք վերցընողին ձե՛ւքը չօրնայ...

Սոմա. — Ա՛խ, ես անենկ անուշ, անենկ ուտումնակա՛ն, անենկ թէրպիլէլու աղշիկ ուր էի տեսեր...

Նազլու. — Ապլա՛, երե՛կ քեզի ուր գացիր անխրտար բան տեսար. մենք ալ մարդ ինք ու կ'ապրի՛նք...

Խառն. — Տէ՛, տէ՛, գու՛ն ալ խաֆատաշ

մ'իլլիր տատիդ ու քրորդ հետ. դո՛ւն մնացիր մեզի չի հաւնող :

Մումա. — Ա՛խ, պուպո՛ւնկ, ատենկ մ'ըսեք, մենք խոտի պէս եկեր ինք, խոտի պէս կ'երթանք : Դուն իս ուր դրպատուն խրկէիր նը՝ ես անենկ քորնը քորը չի տի պսակուէի ան մարդուն հետը :

Խառնակ. — (Հայրացած) Տէ՛, տէ՛ Սարմազ գացիր, քան որ կեցար չի կեցար, ատենկ խորթաներ սորվեցար : Դուն ո՞վ ես որ պսակի գէ՛մ խորթմա տ'անես, տըհա երէկի հարան ես ... Իշտե՛ ատ լեզուիդ հըմա՛ր է ուր աս բաները գըխիդ կուգան ես ...

Մարգար. — Կնի՛կ, պուսալու հաճէթ չի կայ. աղշկիկն սիրա՛ր էրեր ե, թո՛ղ ըսէ ...

Խառնակ. — Հը՛մ, չորս թարաֆէն վրաս թափեցէք : Քանի ուր ես տանը մեծն իմ նը՝ չէ՛, ետե՛կ չէ ուր բերաննիս տի բանան ինծի գէ՛մ :

Մարգար. — Կնի՛կ, դուն անոնց վրայ բըռնաւոր կեսու՛ր ես, ի՛նչ ես. ատ զօրպայուլթիքը գնա բալըրսող կըտտո՛ցը ծախ :

Մումա. — Պուպո՛ւնկ, ի՛նչ ֆայտայ, մէյ մի պարանը պողպաս անցուցիք, հըմա ի՛նչ ալ ուր ըսի՛մ նը պո՛չն է : Ձի կարգըւած ուր հըմըկու խելքս ունենայի նը՝ մոխի՛կ կ'անէի խօսօքընուգ :

Խառնակ. — Չերթայի՛ր բարով Սարմազ ...

Մումա. — Ես ալ չի գայի՛ բարով Ա՛կը :

Խառնակ. — Հէ՛մ Սարմազը գտար պատիժդ, հէ՛մ տե կինէ Սարմազը կ'ըսես կ'երթաս :

Մարգար. — Է՛ կնի՛կ, հերթի՛ք է, չափը կ'անցընես, հիւսնո՛ւտ է մասուլմը :

Խառնակ. — Հիւսնո՛ւտ է նը թող հիւսնո՛ւտ կենայ, քանի եկեր է, Սարմազը սե՛նկ աղէկ է, Ա՛կը սենկ գէ՛ն է, Հոռոփի՛կ հանումը սենկ աղէկ է, դուն ատենկ գէ՛ն ես ...

Մումա. — Ա՛խ, Աստուած պապա, հըմա՛ է ուր աշքս կու բացուի. իշտե՛ գերի՛ ինք գարձեր մեր մեծոնացը, Հոռոփի՛կ հանումը սուտ չէ ...

Խառնակ. — (Բարկացած ոտքի կ'ելլէ) Տէ՛ ես վախիթ չունիմ ձեր թէգրինները մոխի՛կ անելու, Մուլթալիս երթամ, սուլման եփոց իմ դրեր, նայի՛մ : (Մումայի) Մո՛ւս, ըսա՛ծդ է... (Թօթուրքեյով դուռս կ'ելլէ) :

ՏԵՍԻԼ Բ.

ՄԱՐԳԱՐ, ՄՐՄԱ, ՆԱՋԼՈՒ

Մարգար. — Սա թէրս կնկան արածին կու

նայի՛ս. անենկ տ'անէ ուր բերաննիս չի բանանք. Մումա. — Բռնաւոր է դարձեր տանը մէջ ... Նազլու. — Ապա՛, հախ ունիս ըմմա դուն ալ քիչ մի էւել կու քալես, հա՛ ըսէ՛, կաւ քսէ...

ՏԵՍԻԼ Գ.

ՆՈՅՆՔ, ԽԱՋԻԿ

Խաչիկ. (Բարձրահասակ, խոշոր, ծոյլ աչքերով, հաստ պեխերով. Հագած է գլխա եւ սալթա : Ներս կը մեցնէ առանց բարեկնո՛ւ կոշտար կ'երթայ Մարգարի նսած թազնոցին վերի անկիւնը փռուելո՛ղ՝ աջխը յառած ձեղունին ու սիկարը բերանը) :

Մարգար. (Հայրացին ու երկար նայումով մը ձգելով Խաչիկի վրայ. մեմուայով դուռս կ'ելլէ) :

ԼՈՐԵՐԻՆ :

ՏԵՍԻԼ Դ.

ՄՐՄԱ, ՆԱՋԼՈՒ, ԽԱՋԻԿ

Նազլու. — (Վշտացած դեմով Խաչիկը դիմելով) Նե՛րս ուր կու մնաս նը հայրիկին թէմէն. նէ՛հ մի անել՝ ալ մինասիդ չես տեսնար ...

Խաչիկ. — Հայտի՛, հայտի՛, էռըկի գործդ նայէ, իրատենիդ քեզի պահէ :

Նազլու. — Ա՛խ, ի՛նչ տ'իլլի մեր հալը... Հայրիկն ալ ուր չ'իլլի ինտո՛ր տի կշտացնինք աս սիրելի մի տղաքը : Աս ի՛նչ ծամայ ալ է որ դուն բռնեք կ'երթաս ... Ինչո՛ւ ես եկեր գէ՛մս երազիս պէս թէնպէլ թէնպէլ նստեր, գնա՛ գործ ծարէ, քանի մը փարա վաստիկուռ նայէ ...

Խաչիկ. — (Ընկողմանեղով) Օ՛խ, պարծաներուն հովը ի՛նչ անուշ կու փէ. ես չարտախով տուն կ'ուզիմ, իրիկունները եաթմիչ անիմ, պաղ պաղ հովերը եուլթիչ անիմ ...

Նազլու. — (Բարկացած ոտքի կ'ելլէ) Ելիր գնա՛ ասանդացս. հայտե՛ գլխուդ ծարը նայէ՛, ի՛նչ կ'անես արե, դուն քեզ օշունչ ապրեցր ...

Խաչիկ. — (Անջարժ.՝ աջխը գոց) Դուն հանգիստ ես, ես ալ : Աստուած զղբանչ խաթիւն մօրս արեւը պահէ, պահպանէ ...

Նազլու. — Չեքդ քանի մի արհեստ ունիս. դուն բանելու ուր քիչ մի յօժար լընի՛ մենք հուսա Ա՛կինը մէջ պէկի պէս կ'ապրինք ու չօրս միննէթ չինք աներ... Չեքդ պէս պէս ուր ինչ կուգայ, աւղա կու քաշես, փռնծու-

թիւն գիտես, պատ կու շարես, ինչ ուզես նը չես կրնար... .

Խաչիկ. — Օ՛խ, օ՛խ, անուշ հոգեբը կու փշեն պապա՛մ, վե՛՛վ է խնթըցեբ ուր բանի :

Նազլու. — (Թուզումով) Իս մի՛ ճաթեցներ. սրտեղէն դո՛ւրս ելի՛ր, ո՛ւր կ'երթաս գնա... Օ՛Փ, աման, Աստուած հոգիս անէն, խալըսիմ ձեռացդ. հայտի՛, եկի՛ր, հայտի՛... (Մաշիկի քեռեն կը բռնէ ոտքի հանկու) :

Խաչիկ. — (Թորվելով քեռը) Թո՛ղ քե՛շ մի քննամ, առաւելն իվեր հոգի՛ս է ելեր :

(Իտուրեմ) Նազլու՛, Նազլու՛, քե՛շ մի դո՛ւրս եկուր :

Նազլու. — Ը՛հընա՛ կուգամ (Դուրս կ'եղի) :

Խաչիկ. — Փա՛ռք քեզ, Աստուած, կտոր մի խալըսեցայ ձեռքէն : (Այլեւր կը գոցէ) :

ՏԵՍՒԼ Ե.

ՍՐՄԵ, ԽԱՅԻԿ

Սրմա. — (Երկարօրէն եւ վշտաբէկ դեմքով ֆննկելով Խաչիկի դեմքը) Նազուլին էռչին չի՛մ ուզեր որ խօրըթիմ վրադ... քանի՛ որ դուն աս ճաթան բռնեբ ես նը՝ աղճա ես քաշեկքներ չա՛տ ունիմ... (Բարկութեամբ) Ա՛քերդ բա՛ց ու քե՛շ մի ինծի մտիկ արէ :

Խաչիկ. — (Այլեւր կը բանայ) :

Սրմա. — Ո՛ր գրքին մէջ գրեր են թը քու մեղքերդ ե՛ս քաշելու պարտեկան իմ... .

Խաչիկ. — Ես ի՛նչ անիմ, էհալիին գնա խօսք հասկցուր : Իմ խապահաթս ի՛նչ է, ուր տայիմ տատիգ հեա մէկ կուլիք, կ'ըսէք կ'ըսէք աս կ'ըսէք... .

ՏԵՍՒԼ Զ.

ՆՈՅՆՔ, ՆԱՋԼՈՒ

Նազլու. — (Ուրախութեամբ Խաչիկի) Տէ հայտի, գործը ողբդ է եկեր : Ըռւշանենց Գիր-գորիկ աղային աւղան կու ցաւի, մարդ խրկեր են ետեւէդ ուր երթաս քաշես. հայտի՛, չուտ, տղան վար քեզի պէքէմիշ կ'անէ :

Խաչիկ. — Ո՛վ ըլաւ իրենց ուր ետեւէս մարդ խրկեն, աս ի՛նչ է որ գիշեր ցորեկ հոգիս կ'առնեն : Տըհա նոր եկի թը օտքերս քե՛շ մի փոխիմ, չըմա՛ն ետեւես բռնան : Թող սեպեն թը խաշուկ աղբարը թալանին զարկին... . Թող

սեպեն թը տըհա Վառնէն չիմ եկեր... . Թող սեպեն թը հիւսնա իմ... .

Նազլու. — Ատուիդ ու ձեռուիդ կու պագ-նիմ. իս մի դողացներ. ամօթ է չերթալդ :

Խաչիկ. — Երգո՛ւմ իմ արեր ուր մարդու ա՛լ առջայ չի տի քաշիմ :

Սրմա. — Էնիշտէ աղա, հայտի՛ գնա եկուր ուր կերակուրն եփի ուր ուտէք :

Խաչիկ. — (Մեկուսի) Կերակուր տ'ուտիք իրա՛ւ... (Բարձր) Է՛օֆ, էօ՛Փ, էօ՛Փ, Նէ՛ կի-րակի գիտեն, Նէ լուր օր. բանէ՛ հա բանէ, տա՛ն իշ կա. (Ոտքի ելլելով) Տըւածնին ի՛նչ է : Ես վախթին լիբաներուն քօղին վրայ կու պառ-կէի... . Ըմամ երուր խումարի ուր եղայ, աղա պապայիս ան կարմրուկ ուկիները ջուրի պէս ուր հօրնցուցի՛ իշտէ ան վախթիս իմ մուկս մարե-րեցաւ... . Վա՛խ խաշօ, ան փարաներն ուր չըմա ծոցս ուր ըլլէին՝ աս կիկս ու աներ պապաս իմ խմէթս տի գիննային... . Նէ իսէ : (Դանդաղօրէն դէպի դուռը յառաջանալով) Երգում արեր էի ըմամ Նէ՛ իսէ : (Դուրս կ'եղի) :

Սրմա. — (Ձեռները տարածելով) Տէր Աստուած, իշտէ աս մարդն է որ երկու քուրե-րուս կերած հացը աղու կու դարձընէ... . Նազ-լուին հալը իմինէս ալ պէթէր է... .

ՏԵՍՒԼ Է.

ՍՐՄԵ, ՆԱՋԼՈՒ, ՄԱՐԳԱՐ, ԽԱՏԷՄ, ՊԵՐՈՍ

Նազլու. — (Արտաւանգ ներս մտնելով) Ապ-լա՛, Պէրոս աղան եկաւ կինէ :

Սրմա. — (Իժգոմ) Վէ՛՛վ տէ՛վէթ կ'անէ :

Պէրոս. — (Կնակ, կարճաճասակ, փեշը միկնջեալ ակննցներ իջած, տախկ երեւոյթով, աղջոտ մօտոյնով, ձեռքը պայտասակ) Երկու օր է ուր չեմ երբուր : Էմէն օր թըխէթ անկու է... . Բարեւ, Սումա հանըմ, տուած գեղերս իշալլա՛հ ֆայտա մի կ'անէ : (Պայտասակը վար դնելով Սրմայի դաստակը կ'ֆննկէ) : Լեզուս դուրս հանէ նայիմ մէջ մի :

Սրմա. (Կ'հնազանդի)

Մարգար. — Պէրոս աղա, աղէյ մի իմա-ցիր, եկեր ուր չիտի կրնաս նը, ըսէ ուր տղեթոր Արութինը կանչիք :

Պէրոս. — Հալլա՛, հալլա՛, հալլա՛, Մար-գար աղա, հե՛ն բան չունի. իմ շինած հապերս

ուր կլլէ, տուած թերթիպնեցուն աղէ՛կ ուր թըխէթ անէք նը՝ տասը օրէն վեաք կ'իլլայաւտ թարաֆէն անՀո՛գ եղիք. ճամբու թուու-թին է, կ'օսնի...

Խառն. — Պէյրուս աղային ձեռքէն մինակ մեռելը օղընցընել չի գար: Աս Ակինը մէջը մարդ չէ՛ մնացեր որ իրեն ձեռքին տըղէն օնցած չիլլի. ֆսան տարի է ուր աս զանաՀաթին մէջն է: Իրաւ է որ ան Ստըմպուլէն եկած թախում մի Հէօտիւկ-գիւպպէնեցուն պէս ձեռքը վկայական կ'ըսեն, տիվրուն կ'ըսեն, ի՛շ խարախօթիկ է, չունի ըմմա, անոնց փութունն ալ թերս կու կարգացընէ մեր Պէյրուս աղան:

Պէյրուս. — Ատ տղթորները խասպու պէս մարդը եէ՛ կու զըլոյն, եէ՛ կու մորթին:

Մարգար. — Ատ ըսածներդ աղէ՛կ ըմմա, Պէյրուս աղա, աս տանըՀինգ օր է ուր մեզի կու կարգացընես թը ի՛շտէ վաղը օտքի տ'ելլէ, ի՛շտէ մէկըօր. օտի իլլալէն վաղ օնցանք, օր ըստ օրէ ե՛տ կ'երթայ մայրուն: Հաթտա խարաՀխարու մէշուր տղթորն ալ ըսաւ թը ջիղեբու խանգըրուս է եղեր, աղէ՛կ Հոգ տանելու է...

Պէյրուս. — Մարգար աղա, աստե՛կ տղթորներ ես շատ իմ տեսեր. ես անոնց փութունն ալ մատիս վրայ կ'ունիմ, կու խաղցընիմ: Ես աս աղչկան տերտը տըՀա՛մ էվել աղէ՛կ կու Հասկընամ, ըմմա ի՛շ ֆայաւ ուր աս բանը ձեռքես չի գար: (Ֆէրը հանկոյղ թառձին վրայ կ'իցնէ) Էձե՛կ անելու չէ. կամաց՝ կամաց, ա՛հետե՛հ ա՛հետե՛հ...

Մըմա. — Կամաց կամաց ես բարակը կու մաղուիմ, դուն խապար չունիս...

Պէյրուս. — Դուն ֆոզ անելիք բան չունիս. ի՛շտ ես աս պատին վրայ չիդ մի կու քաշիմ, (Պաք եղունգովը կ'զծէ):

Մարգար. — Պէյրուս աղա, քուզուս, եկէր ուր չի տի կրնաս նը՝ տըղուտն ըսէ ուր անոր կէօրէ շարօթիք: Աս մայրունին Հալը Հալ չէ՛:

Պէյրուս. — Աստուա՛ծ. վկայ, Ս. Աւետարա-նին վրայ երգում կ'անիմ պիլէ, բան չունի. Դուք իմ ըսած թերթիպնեցուն աղէ՛կ խուլլաւիշ արէք: Ցուս՝ Հապերս օրը իրեք անգամ տի կլլէ. մէյ մի առտըանց արեւն ուր քարը ցաթէ. մէյ մի ցորեկը մօլլան կանչէ նը. մէյ մին ալ իրկունը՝ կոնակը զարնէ նը: Մտի ջուր ու կաթ թող խմէ. աղի լեղի թող չուտէ. իշտէ աս է:

Տասը օրէն, էվել չէ, փեր ու փաք կուլլի:

Խառն. — Պէյրուս աղա, մէյ մի տերպա-պային տի կանչիմ ուր գայ վրան Աւետարան մի կարդայ:

Մարգար. — Պէ կնի՛կ, Աւետարան մաւե-տարան խօլայ է, ճար անինք ուր մայրումը օտքի էլլէ: Մէյ մի տղթոր Արուժինը կանչենք, Հուսա Արապկիր օխտը սըՀաթ է...

Խառն. — Դուն ուր մէյ մի Սօ ուր ըսես, չօ էս ըսեր տըՀա: (Պէյրուսին) Աս բանին վրայ ուր մանն ուր գնէ նը ալ ետ չաւնիք, խու՛նի է:

Մարգար. — Աս իմ մեղքս է, ի՛նչ ըսիմ:

Պէյրուս. — Մարգար աղա, էմէն բանը բաց չըսուիր: Աս աղչկանդ տերտը պաշխա է...

Մըմա. — Դուն իս ուր ա՛հաթ ձգես նը՝ ես տերտ չունիմ. ձեռքէդ ուր չի գար նը՝ վաղ եկուր գնա:

Խառն. — Հը՛մմ. պապանձի՛ լեզուդ. աս լեզուովդ դուն տըՀա շատ քաշելիքներ ունիս...

Պէյրուս. — Ծանը՛մ ձգէ, խեւե՛մ խաթուն, ան Հիւո՛նտ է. ան. գիտէ քի մենք Հոս ուր կերթանք կու գանք նը պօշ տեղն է: Աս գիտես աս զանաՀաթին մէջն իմ ձերմկցուցեր:

Խառն. — Հա՛, Պէյրուս աղա, կիւձէնմիշ մ'իլլիր, ցաւուն զօրէն ի՛շ խօրթեմը չի գիտեր Հըմա նոր բան ի ունի՞ս տալու, ան ըսէ:

Պէյրուս. — (Պաշտասկին շիշ մը ղեղին հեղուկ հանկոյղ) Աս կու տեսնէք, ասոր կ'ըսեն «անմահաճութեան ջուր»: Մախուս Ամա Հանրմին Հըմար շիներ իմ: Ես էօթէտէն պերի ձեր խը-նամումիք կու սեպիմ, շատ չի՛մ ուզեր, երկու չէյրէք: (Մարգարի՛ն ներկայացնելով)

Մարգար. — (Տաճանուելով) Աս ի՛նչ իլաձ է ուր...

Պէյրուս. — Աս իլաձը ան նորելուկ տղթորները չի գիտեն: Իմ աղապապաս, էմնուդ ալ մայրում է ուր, վախճովը մէշուր տղթոր մին է եղեր: Ան Ձինումէնու Հէքիմէ մի սորվեր է, լուս իշնէ վրան, օրդուց օրդի սըռ տէրի մեզի Հասցուցեր է: Անունը «Անմահաճութեան ջուր» է ըմմա մէջուդ չիմ կրնար ըսեր:

Խառն. — Արեւուդ խուրպան, Պէյրուս աղա, ո՛ւր տեղն ալ միտքը ընկեր է: Աղա-պապադ լսեր իմ, չի գննուած Հէքիմ է եղեր...

Պէյրուս. — Հիմա աս ջուրը պիլլօր պիլլօր օրական տուէք ուր խմէ: (Կրկին ներկայացնելով Մարգարի:)

Մարգար — Պէյրուս աղա, առնելը խօսյալ է ըմմա, օղո՛ւլ, ալ կ'ընտելիք տեղ չմնաց վրանիս : էկեր ուր ա՛ս ալ ուր մըկըննորուն պէս տ'իլլի նը՝ պո՛շ բան է :

Խաթեմ. — Մա՛րդ, ձեռնէրտութիւնդ կու բռնէ հարուր օսկի խարձ կ'անես մինչուկ Ստըմ՝ պոլ կ'երթաս, տասը խուռուշի հըմար, ա՛ն ալ անմահ-հաւեան ջրիկին հըմար կու խնայես :

Մարգար. — (Հառաջելով քանիւր կ'իսնէ եւ երկու քառորդ կ'դնէ Պէյրուսի ափը) : Զի՛մ խնայեր, կնի՛կ, չի՛մ խնայեր, հոգիս պիլէ սանկ փութունիդ խուրպան կ'անիմ ըմմա գիտիմ ուր պո՛շ բան է :

Պէյրուս. — Շէն կենաս, Մարգար աղա՛ (ձեռք գրուխը դնելով պայուսելու կ'առնէ) : Իշ-ալլա՛ ժոռ օրէն կ'աղէնայ, հոգ մ'անէք : Ասոր հիւսնտ շա՛տ ունիմ : Ար օր ուր պէտք ունենար ինծի, ես սիրով կուգամ, պարտքս կու կատարիմ : Դառա՛յ իմ Մարգար աղայիս : Մնաք բարով : (Կը մնկնի) :

Պաթեմ, Նազլու. (Կ'երբան հալիքի) :

ՏԵՍԻԼ Ը.

ՄԱՐԳ. ՄՐՄԱ, ՅԵՏՈՅ ԽԱՏԷՄ, ՆԱԶԼՈՒ

Մարգար. — (Պէյրուսի անձնեանայը դիտելով) Երթա՛ս բարով ալ չիքա՛ս բարով : (Վեր առնելով գետնէ թողաճ շիշը) Աղան անմահ-հաւեան ջո՛ւր ալ ունի եղեր... Աս ի՛նչ է ուր օտքը տուններուն ելիկէն չի՛ կըլլեր :

Մրմա. — Երեսին կաշին քըզ փինէն աճուր է, Խաթեմ, Նազլու սենեակ կը վերադառնան, Աս մարդը մեզ պո՛շ տեղը կու խաղցընէ, կնիկ, օրօրի վիճակը կու ծոյրընայ խապար ես, Խաթեմ. — Պէյրուս աղան ի՛նչ է եղեր ուր չես հաւեր :

Մարգար. — Կնի՛կ իս մի՛ ճաթեցըններ, աս Պէյրուսին ձեռքէն բան չի գար : Խոշոր խոշոր ջարդերով գիտէ մինակ : Կնի՛կ, դուն կու քնա-նաս : Ստըմպոլ ի՛նչ չէքընի՞ր կան. Երեսն ուր կու նայիս, գիտես թը ցաւերդ փութուն վրա-յեդ կ'երթան : Պէյրուսը վէ՛ճ է ուր. ան քէլ օղլանին երեսը նայողը վէ՛ճ է : Արածն ալ իշտէ քան օր է ուր կու տեսնի՞ր : Հայօղա՛ւ, աս տաքթոր Արուսեանին գործն է :

Խաթեմ. — Գուն Ստըմպոլէն չէիր եկեր ուր փշիկնոց կովը մահու գունէն խալընայ :

Մարգար. — Պէ՛կ կնիկ, աս աղշիկը կով չէ,

աս սիրտս կովու սիրտ ալ չէ : Ան՛ժ ի՛շ կ'ըսէ, թող ըսէ. Իշտէ ես կ'երթամ տաքթոր Արուսեանին թեւըրաք կու քաշիմ : (Թոքիջնելով դուռս կ'եղէ) :

Խաթեմ. — Գլո՛խն ի փորը, ի՛շ կ'անես արէ, կտոր մի փարա է մնացեր, ան ալ հասցուր աս խափայիդ երեսէն :

ՏԵՍԻԼ Թ.

ՄՐՄԱ, ԽԱՏԷՄ, ՆԱԶԼՈՒ

Նազլու. — Պուպո՛ւկ, հայրիկը անխտէր ուր կ'ըսէ ըմմա հա՛խ ունի. աս քան օ՛ր է ուր մեզ կու խաղցընէ :

Խաթեմ. — Գուն ալ տատիկ պէս մի՛ պաշ-լայեր. Պէյրուսին մէրիֆէթը նոր չի՛ տի գնի-նայք. ի՛նչ հրաշքներ կու պատմէ՛ն...

Մրմա. — Ո՛յ աման գօրիս. մա՛յհն ինք ելլէ եօխըննուն : Օր մին ալ ուր օտքը հոս կոխէ նը՝ օտային դուռը ներսէն տի կըլլիմ, գիտցած լընիք :

Խաթեմ. — Սրումա՛, օղո՛ւլ ատ լեզուս քու տունդ կ'աւըրէ. ես ասխորտար կ'ըսիմ : (Թօք-ւրջնելով դուռս կ'եղէ) :

ՏԵՍԻԼ Ժ.

ՄՐՄԱ, ՆԱԶԼՈՒ

Նազլու. — Ապա՛, հուսա երկուքս մնա-ցինք : Ստամպոլու վրայ բան խորըթէ մտիկ անիմ :

Մրմա. — Ա՛խ, Նազլու, քանի ուր Հուսիկ հանըմը տեսեր իմ նը՝ պուպուկը գըթիս կուգայ, ի՛շ մեզքս պահիմ... Ստըմպոլ գալու էիր ուր հասկընայիր թը ի՛նչ ամթ բան է կարգալ գրել չգիննայը : Հուսիկ հանըմին չօրուսները տեսնէիր... Մօրեմունտ ծուխներուն վրայ կու թառէին՝ կարու պէս կու կարնիւնէին. հա՛վաս կուգար : Ա՛խ, հիմա ուր գիր գրել գիննայի նը ի՛շ բաներ տի գրէի Հուսիկ հանըմին...

Նազլու. — Ապա՛, Ստըմպոլէն քանի եկեր ես նը շա՛տ ես փոխուեր. էտէլ աննիկ չէիր :

Մրմա. — Իմ աշքս Հուսիկ հանըմը բա-ցաւ... Աս ո՛վ է ուր մեր տունն է եկեր :

Նազլու. — (Ոտ բլնելով) Կոզիկ աղային կնիկն է, պուպուկին հետ կու խորաթէ :

ՏԵՍԻԼ ԺԱ.

ՆՈՅՆՔ, ԽԱՏԷՄ, ՄԱՐԿՈՒ

Խաթեմ. — (Մարիգայի հետ խօսելով) Մէ-րէդ մի՛ աներ շատ : Մի՛ վտնար, գէշ խապարը

թե՛զ տեղը կուգայ կու հասնի... Աշէկ խապարը ուշը կու մնայ...

Մարիցա. — (Հալկան դիմով, պարզ սեւեր հագած Ակնայ օտարով. երբեմն քաղկեդոնական օտարներ կը օտարի եւ արցունքներ կը սրբէ. Միտէ կերկրուն ծայրով) Վեց շաբաթը լմացաւ, օտար մտանք՝ տըհա խապար մը չիք առեր... (Մումայ ձեռքէն բռնելով, պաղատեցին) Տրուտը ըտէ, Սումա՛, մերինը Ստըմպով տեսաք թը չի տեսար:

Սումա. — Երեւ ուր Զապթիյէ-խափուսի ուր բերին Նը, կողիկ աղան ալ հետերին եկաւ:

Մարիցա. — (Հալկան) Եւսապ Թո՛վը ինկաւ՝ մարդ չգիտցաւ... Եւսապ հափուսին քեօջէ՛ն մնաց՝ մարդ չիմացաւ... Եւսապ գտար հիւսնա է՝ մարդ չիգիտէ... Ա՛խ, Նէ՛ ուսուցի գիտիմ, Նէ՛ խնայ: (Դառնապես կոչլայ)

Թափեմ. — Մարիցէ, առիւտար ֆէսֆէսէ անիւնն տեղը չիկայ. կողիկ աղան փէք կաղուած մարդ չէ... Զէհէր գիր խրկեր՝ ճանախ կոր-բըւրէի է:

Մարիցա. — Օր մի մեր գրիկը խալիպ չէ եղեր: Աս գիշեր ալ երազս տեսայ ուր կիւյէ մերինն է, ձեր Նիկողոս աղային ու Մարգար աղային հետ ձեր խոս պախճային կոլըզերին (աւաղան) զոխը նստեր են քախի կու խմեն ու Թափ կու գարնեն: Մինք ալ առնենք փութունն եռ-ղնին հալալ կու գառնանք ու տէֆ կու Թիքիք:

Թափեմ. — Տեսած երազդ կ'արժէ, Մարիցէ, ինչալլահ ուր առնենք տ'իլլի: Ե՛, վե՛՛՛՛՛ գիննայ, կու նայիս Աստուծու տէֆթէրին մէջ ա՛տ ալ գրուած կու կենայ...

Մարիցա. — Եւսա՛ն, ես շատ երազներ տեսայ, հիշ բան մին ալ չեղաւ. ի՛շ կուլէր ուր էմէն բան Թափեր կախեր ու ելլէր գար ձերբունը հետը. ի՛նչ հասկցեր է տասներհինգ տարի է ուր... ես ալ չիւրիմիշ եղայ, ինք ալ...

(Դրանք աղմուկներ կը լսուին)

Թափեմ, Նազլու. — Աս ի՛շ կիւրիթիւ է էրափովանն ի վէր (Թուրք կը նետուին):

Լուսիբն:

ՏԵՍԻԼ ԺԲ.

ԽԱՏԷՄ, ՆԱՂՈՒԻ, ԽԱՅԻԿ, ՈՍՏԻԿԱՆ ՄԸ, ՆԻԿՈՂՈՍ ԿՈՅԻԿ, ԲԱԶՄՈՒԹԻԻԿ

(Ներս կը մտնեն ընդհանուր խանդավառութեան մէջ)

Նիկողոս. — (Շրջապատուած բազմութեան, պատառասունք եւ ցնխոտած հագուստներով, մեռ-

իք բիր, ոտներ օտիս, այրուած ու սպառած դեմով) կ'սկսի որբագին) Աս ամիս մըն է ուր օտարով ծածկայ ինք քալեր: Ա՛լ խամշի չի մնաց ուր չուտէի... Ա՛լ հարուս չի մնաց ուր չի մնէի: Ո՛ւ, աման օտարոս, ո՛ւ, աման մէշքս... Ճիւղուս միտերը կու թափին: Աս Աստուծու պատիժն էր...

Կողիկ. — (Նոյն ախոռի խոռոչ երեւոյթով Ա՛լ լմացա՛նք, մեռա՛նք, միշուկ ուր Ա՛լը եկանք ընկանք... Մարգար աղա, Սումա, աշ-քերնիդ լուս, ձեր ետընէն Աստուծու հրամանովը (Ձեռները բազկատարած) Տէ՛ր Թափաւոր, Արդար գառաւոր, աս քու գաղտնիքդ, ուրիշ քան չէ:

Բազմութիւնը. — Նոյն պահուն Մարիցան ճեմաբելով կըրնած պատի մէկ անկիւնը՝ կը ներկայացնէ Կողիկի՝ որոտընդոտ ծափերու եւ աղաղակներու մէջ: Կեցցէ՛, կեցցէ՛...

Կողիկ. — (Յանկարծ ճանցնալով) Վա՛յ իմ անմահ կողակիցս Մարիցէ, դո՛ւն ալ ֆոս ես. հիմա խելքիս տի գամ... (Կը գրկախառնուին)

Սումա. — Ապաւած կը կանգնի անկողնին մէջ եւ երազէ արցնցածի պէս կը օփէ աչիները) Տէ՛ր Աստուծու, ճապաք ըսէ իմ թը արթուն...

Նիկողոս. — (Թեւեք բանալով կը փաթարուի Սումայի) Ա՛խ Սումա, անուշիկ Սումա, ես արժանի չիմ քու գլխաւորդ ըսուելու... Սումա՛, դուն հրէշտակի պէս աղչի՛կ ես եղեր... Թո՛ղ Աստուծու կածալը իշնէ մեր առւելմններուն գլխուն: Ա՛խ, անուշիկ Սումա, գլխուդ եկած ներքէմէնն ալ գիտիմ: ԵՍ ԲԵՃ ՄԵՆԱՅ, ԵՍ ԲԵՃ ՄԵՆԱՅ... (Կը համբուրուին իրարու գրկախառնուած)

Ոսիկանը. — Պունտան պէտքէ տըհա մուհապէթէ եւալայընդ: (Բարեւելով կը մեկնի)

ՏԵՍԻԼ ԺԳ.

ՆՈՅՆՔ, ՄԸՊԳՄ

Մարգար. (Ռախուրեանք զգլխած ներս կը նետուի)

Լուսիբն.

Նիկողոս. — (Թեւեք բանալով կ'ուղղուի Մարգարի վրայ) Անքեր պապա, ես արի դուն Դաներ, մեղա՛յ, մեղա՛յ, մեղա՛յ...

(Աւարագոյր)

ԳԵՂԱՄ ԱՐՅՈՒՆԻ

Վ Ե Բ Զ